ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 39 - Ա

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 26.03.2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 126-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. ապրիլի 10-ի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված կարգով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել ՀՀ Վայոց ձորի մարզի քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների ցանկը և ծառայությունների պետերի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի մարտի 26-ի №126-Լ որոշումը:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Արսեն Խաչատրյանի վրա:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639

Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2026 թվական փետրվարի 17

ք.Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի
մարզպետի
«14» 02
2026թ.
թիվ 39 որոշման

ՀՀ Վայոց ձորի մարզի քաղաքացիական պաշտպանության մարզային

ծառայությունների ցանկը և ծառայությունների պետերի կազմը

Ծառայության անվանումը	Ծառայության պետի զբաղեցրած պաշտոնը
Հասարակական կարգի պահպանման	ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Եղեգնաձորի բաժնի պետ:
Ինժեներական և կոմունալ տեխնիկական	Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ (ծածկագիր՝ 99-30.1-Ղ4-1):
Առևտրի և սննդի	Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 99-31.1-Մ2-1):
Նյութատեխնիկական մատակարարման	Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ (ծածկագիր՝ 99-31.2-Ղ5-1):

Տրանսպորտի	Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 99-30.1-Մ2-4):
Բժշկական	Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ (ծածկագիր՝ 99-30.2-Ղ4-1):
Բույսերի և կենդանիների պաշտպանության	Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ (ծածկագիր՝ 99-30.6-Ղ4-1):
Կապի	Մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ (ծածկագիր՝ 99-30.3-Ղ4-1):
Էներգետիկայի	Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ (ծածկագիր՝ 99-30.1-Ղ5-1):